

Շրջակա միջավայրի նախարար
Պարոն Յ. Սիմիոյանին

Հարգելի պարոն Սիմիոյան

Ձեզ եմ ներկայացնում «Արմավիրի մարզի, Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում Երկհարկանի առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը»: Խնդրում եմ իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և տրամադրել փորձաքննական եզրակացություն:

Փաստաթղթերի թղթային տարբերակը և հանրային լուսմների տեսաձայնագրությունը ներկայացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ:

Ձեռնարկող՝



Գևորգ Գևորգյան

07.12.22թ.

ք Արմավիր Հանրապետության 2-րդ նրբ 37տ.

Հեռ. 077 88 78 28, abgaram@mail.ru

Արմավիրի մարզի, Արմավիր քաղաքի
Երևանյան 44 հասցեում Երկհարկանի
Առևտրի կենտրոնի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության

Նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝



Գևորգ Գևորգյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն-----	Էջ 4
2.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը-----	Էջ 4
3.Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացների վերաբերյալ-----	Էջ 8
4. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և հայտի մշակման հիմքերը-----	Էջ 8
5. Նախատեսվող գործունեության տարածք-----	Էջ 9
6. Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները-----	Էջ 11
7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր-----	Էջ 18
8.Ժամանակացույց-----	Էջ 20
9. Շրջակա միջավայրի բնութագրերը-----	Էջ 21
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը-----	Էջ 22
9.2. Սեյսմիկա և երկրաբանություն-----	Էջ 23
9.3. Կլիմա և օդային ավազան-----	Էջ 23
9.4. Հողային ռեսուրս-----	Էջ 27
9.5 Ջրային ռեսուրս-----	Էջ 27
9.6. Կենսաբազմազանություն-----	Էջ 29
9.7. Պատմության և մշակութային հուշարձաններ-----	Էջ 31
9.8. Հատուկ պահպանվող տարածքներ-----	Էջ 33
9.9. Սոցիալ-տնտեսական-----	Էջ 33
10. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու իդիսատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը-----	Էջ 35
10.1. Օդային ավազան-----	Էջ 36
10.2. Հողային ռեսուրսներ -----	Էջ 36
10.3. Ջրային ռեսուրսներ-----	Էջ 37
10.4.Կենսաբազմազանություն-----	Էջ 37
10.5.Թափոններ-----	Էջ 38
10.6.Աղմուկ և թրթռում-----	Էջ 40
10.7.Արտակարգ իրավիճակներ-----	Էջ 41
10.8.Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն-----	Էջ 42

10.9. Պատմամշակութային և բնության հուշարձաններ-----	Էջ 43
10.10 Սոցիալական-----	Էջ 44
10.11 Բարեկարգում և Կանաչապատում-----	Էջ 44
11.Մոնիթորինգ-----	Էջ 45
12. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան-----	Էջ 47
13. Մոնիթորինգի պլան-----	Էջ 59
14. Հանրային քննարկում-----	Էջ 62
Գրականություն-----	Էջ 63

1.Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 44 Առևտրի օբյեկտի կառուցման
Ձեռնարկող՝ Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Գևորգ Գևորգյան ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հանրապետության 2-րդ նրբ. 37 տ.
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 44 հեռ. 077/887-828, abgaram@mail.ru AR 02777195, տրվ. 02,05,2017թ. 048
Ձեռնարկողի հեռախոս, Էլեկտրոնային փոստ՝ Պատվիրատու՝	Գևորգ Գևորգյան ՀՀ Արմավիրի մարզի, Արմավիր քաղաք
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Աշխատանքային նախագծի մշակող՝	Նախագծող՝ «ՕԳ.Ա Նախագիծ» ՍՊԸ

2.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)-Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների

նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)-Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ

նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.)- օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝2002թ. հունիսի 12) – Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

ՀՀ կառավարության որոշումներ

- **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝** «ՀՀ բնության հուշարձանների

ցանկը հաստատելու մասին»:

- **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում**՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում**՝ «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:
- **ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում**՝ «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 16 հունվարի 2014 թվականի N 55-Ն որոշում**՝ Զաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

3. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են 1500մ²-ից ավել կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները: Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի՝ համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Գ կատեգորիայի ընթացակարգով: Գ կատեգորիայում ներառված նախատեսվող գործունեության տեսակների դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Արմավիրի մարզի, Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում Առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը Օրենքով սահմանված կարգով՝ 05.08.2022թ. Շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացել է փորձաքննական դրական եզրակացություն(ԲՓ 0113-22): Հավելված 7:

Եզրակացությունը ստանալուց հետո Ձեռնարկողը գործունեությունը չի իրականացրել, քանի որ կատարել է նախագծային փոփոխություններ: Նախագծային փաստաթղթերի փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նոր նախագծային փաստաթղթերի հիման վրա կազմել նախնական գնահատման հայտ և կրկին ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ փորձաքննական եզրակացություն ստանալու նպատակով:

4.2 Զեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և հայտի մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գևորգ Գևորգյանի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հանրապետության 2-րդ նրբ. 37 տուն: Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Արմավիրի մարզի

Արմավիր համայնքի վարչական շրջանում Երևանյան փողոց 44 հասցեում: Հավելված՝ 5,6:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ շրջակա միջավայրի վրա դրական եզրակացություն ստանալուց հետո, քաղաքաշինության համալիր փորձաքննության ընթացքում պահանջ է ներկայացվել վերանայել նախատեսվող գործունեության նախագիծը, նախատեսել «Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ», հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված հավելվածի 50-րդ կետը և նոր կառուցվող հասարակական նշանակության շենքը նախագծել նկուղային հարկով՝ բնակչության պատսպարման նպատակով: Միաժամանակ ձեռնարկողը նախատեսել է նաև առևտրի կենտրոնի նախագծային լուծումների փոփոխություն՝ շինությունը կառուցել 2 հարկանի:


Շենքի նախագծման համար հիմք են հանդիսացել.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ Հավելված 1:
- Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կողմից տրված նախագծման թույլտվությունը (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Հավելված 2:
- «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ ինժեներա-երկրաբանական հիմնավորումը:
- «Սեյսմամանվտանգություն» ՍՊԸ Փորձաքննության եզրակացություն (Փ14-22):

5. Նախատեսվող գործունեության տարածք

Գործունեության տարածքը գտնվում են Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական շրջանում, ընդհանուր մակերեսը 0,37հա է: Տարածքը վաղ ժամանակներից գտնվում է մարդածին ագդեցությունների գոտում, փողոցի կողմից զբաղեցված է նախկին Դոսաֆի 4 հարկանի կիսաքանդ կառույցով, մյուս կողմից՝ ավտոտնակների պարիսպով: Բաղրամյան փողոցի կողմից առկա են ավտոտեխսպասարկման կետեր: Տարածքը Երևանյան փողոցից հեռու է 9.2մ, այդ մասում շինարարության ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, դեկորատիվ սալիկապատում և կանաչապատում: Գործունեության ենթակա տարածքում և հարակից տարածքներում պատմա-մշակութային, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման տարածքներ, մակերևութային ջրային հոսքեր առկա չեն: Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը այլ հողամասերից և օբյեկտներից կազմում է 6-10 մ:

Նախատեսվող գործունեության տարածքի հողամասն՝ ըստ նպատակային նշանակության բնակավայրի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:



Շրջանը և տեղամասը գտնվում են տաք կլիմայական գոտու մեջ, որը բնութագրվում է շոգ ամառով և ցուրտ ձմեռով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41°C, նվազագույնը՝ -31°C: Գերակշռում են միջին արագությունների առավելագույնով 3,5մ/վրկ արագության արևմտյան (հունվար) և հարավ արևելյան (հունիս) քամիները: Քսան տարին մեկ անգամ մինչև 29մ/վրկ արագության քամիներ: Ձյան ծածկոցի հաստությունը, տասնօրյա առավելագույնում կազմում է 42սմ: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ստորին-վերին չորրորդական տուֆերը, բազալտները և լճա-այլուվիալ նստվածքները, որոնք հիմնականում ծածկված են ժամանակակից կավային, ավազային, խոշորաբեկորային և տեխնածին գրունտներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տվյալ տեղամասերում տարածված են շերտային տիպի ջրերը, կապված այլուվիալ առաջացումների հետ և խորքային միջլավային ջրերը:

Ռելիեֆ և սեյսմիկա. համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը $A_{max}=0,33g$ հատկությունների երկրորդ կարգի են:

Գրունտի սառելու առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-ին 7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղակայված է Արարատյան միջլեռնային հովիտի Հյուսիս արևմտյան մասում: Համաձայն «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ ինժեներաերկրաբանական ուսումնասիրության՝ տեղամասը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են 860,6-862,9 մետրի սահմաններում:

Համաձայն կատարված հետազոտությունների հաշվետվության՝ հետազննվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքին բնորոշ են հետևյալ շերտերը՝ վերից-վար:

Շերտ 1- Լիցք չպառակտված, ճալաքարա-կավավազային կազմի, բուսական արմատներով, մասամբ մալուխի մնացորդներով և քայքայված մետաղյա խողովակներով: Շերտը մասամբ ծածկված է քայքայված ասֆալտով, 5-6սմ հաստության: Շերտն ունի համատարած բնույթ՝ 1,5-1,6 մետր հզորությամբ:

Շերտ 2- Տեխնոգեն առաջացումներ. կավավազ դարչնագույն, պնդից- կիսապինդ թանձրության, մինչև 5%կոպիճով և ճալաքարով: Շերտն ունի համատարած բնույթ՝ 3,9 մետր բացված հզորությամբ: Տվյալ տարածքներում համաձայն ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանց հզորությունն անցնում է 10-15 մետրից՝ տեղադրված խոշորաբեկորային գրունտների վրա: Ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ ստորգետնյա ջրերի տեղամասում՝ մինչև 5,4մետր խորության հետախուզահորով չեն բացահայտվել և համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք ունեն 10-15 մետրից ավելի խորը տեղադրումներ:

Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներա-երկրաբանական հետևյալ երկու տիպերը.


- Շերտ թիվ 1՝ լիցքային,
- Շերտ թիվ 2՝ կավային:

Համաձայն «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ ինժեներա-երկրաբանական հետազոտության եզրակացության՝ լիցքային շերտը ենթակա է հեռացման: Երկրորդ շերտը՝ կավավազներն ունեն պնդից կիսապինդ թանձրություն, կոպիճի մինչև 5% պարունակություն, չունեն վտանգավոր սպիտակահողային նյութերի պարունակություններ և հետևաբար համարվում են բարենպաստ գրունտներ նորակառույցի հիմքերի համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սոֆոզիան, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

6. Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեության նպատակը. համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ հատկացված տարածքի մակերեսը 0,37 հա է: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է առևտրի կենտրոն, ընդհանուր տանիքածածկով, երկու վերգետնյա հարկով շինություն: Նախատեսվում է 364.6 մ² մակերեսով նկուղային հարկ:



Նախատեսվող շենքի տեխնիկական ցուցանիշներն են.

- առևտրի սրահներ 1720մ² և 1625 մ²,
- երկու միջանցք 35 մ² և 28 մ²,
- սանհանգույցներ՝ 10,5 մ², 9,2 մ², 5,5 մ², 9,2 մ² և հաշմանդամների սան հանգույց 5,6 մ²,
- աշխատասենյակ 48,2 մ²,
- պահեստներ 30 մ², 280 մ²,
- էլ. վահանակի սենյակ 6,8 մ²,
- ենթակայան 7,2 մ²,
- աստիճանավանդակ 17,0 մ²:

Ավելացված երկրորդ հարկում նախատեսվում են տաղավարներ՝ առևտրի նպատակով: Նկուղը նախատեսվում է շինության հետնամասում՝ 7,3x49,95մ չափով, 364.6քմ մակերեսով, 2,5մ բարձրությամբ, մոտ՝ 247մարդ տեղավորման տարողությամբ, 4 աստիճանավանդակներով՝ 2 դեպի դուրս ելքով, 2 դեպի շինություն:

Նկուղն ապահովված է լինելու օդափոխության, հրդեհանվտանգության, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով:


Շենքը լինելու է ընդհանուր տանիքածածկով, 40,8x49.95մ չափերի 2 վերգետնյա հարկերով: Կառուցապատման մակերեսը կազմելու է 2037,96մ²: Շինությունը բաղկացած է սրահից, աշխատասենյակներից, պահեստային մասերից, սանհանգույցներից, միջանցքներից, ենթակայանից և կաթսայատնից: Շենքի ուղղահայաց ջրամեկուսացումը կատարվելու է երկու շերտ ձյուկով, հորիզոնական ջրամեկուսացումը՝ 1:2 հարաբերությամբ ցեմենտավազային շաղախով՝ 30մմ հաստությամբ: Ճակատները բոլոր կողմերից երեսպատվում է տրավերտինի սալիկներով:

Կառուցապատման տարածքից ազատ հատվածը՝ 1662,04մ² տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է:

Տանիքի ջրահեռացումը լինելու է արտաքին և հարթ:

Նախատեսվող առևտրի կենտրոնը ծառայելու է որպես մանրածախ առևտուր իրականացնելու համար՝ սնունդ, տնտեսական ապրանքներ, հագուստ և այլն:

Նախատեսվում է տարածքը բարեկարգել, ասֆալտապատել, դեկորատիվ սալապատել և կանաչապատել (սիզախոտով, տեղանքին բնորոշ ծաղիկներով), նախատեսվում է նաև ավտոկայանատեղիների իրականացում: Հատակագիծ՝ հավելված 5: Առևտրի օբյեկտի կառուցումը կապահովի մոտ 35 աշխատատեղ:



Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական, նախագծային և շինարարական նորմերին և առկա քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախապատրաստական աշխատանքներ. շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել՝ տարածքի քանդման և հարթեցման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներ.

- քանդման աշխատանքներ,
- շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ,
- մեքենաներով և ձեռքով հողային աշխատանքներ,

- հիմնային աշխատանքներ, գրունտի հետլիցք, տոփանում,
- արտաքին աշխատանքներ՝ կմախքի, պատերի, ծածկերի, տանիքի իրականացում և մեկուսացում,
- ներքին աշխատանքներ՝ միջնորմներ, հատակներ, ենթակառուցվածքներ և այլն,
- ժամանակավոր կոմունիկացիոն և նախապատրաստական աշխատանքներ:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը գործունեության ենթակա տարածքում կատարվելու են քանդման աշխատանքներ: Քանդվելու են վարչական շենքը՝ 1788,6մ², ավտոտեխսպասարկման կայանը՝ 26,9մ² և ծածկը՝ 36,4մ²:

Հողային աշխատանքներ. առևտրի կենտրոնի կառուցապատման ժամանակ կատարվելու են 1925մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից նկուղային հարկի մասում 1239,7մ³ ծավալի հողային գրունտի հանում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:


Շինարարության փուլում շենքի կառուցապատման համար նախատեսվում է շինարարական հրապարակ, որը կազմում է մոտ 3650քառ. մ, որտեղ լինելու են.

- ամբարձիչներ՝ 2 հատ,
- ժամանակավոր աշխատասենյակ՝ 1 հատ,
- ճաշարան 1 հատ,
- աղբի տարաներ 2 հատ,
- լուսարձակներ 6 հատ,
- հանդերձարան 1 հատ,
- շարժական սան հանգույց(բիոզուգարան)՝ լվացարանով՝ 1 հատ,
- շինարարական ավտոտրանսպորտի ելքի լվացման կետեր՝ 2 հատ, շինհրապարակի մուտքի և ելքի մոտ,
- հակահրդեհային վահանակ՝ 1 հատ:

Շինարարության փուլում Երևանյան փողոցի կողմից կառույցն առանձնացվում է ժամանակավոր տեղադրվող վահանակային պատով (70մ), շենքի 3 կողմից տարածքը առանձնացված է գոյություն ունեցող քարե պարիսպով (175մ):

Շինարարական հրապարակ.

Գծապատկեր 3.



Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1,20x1,50 չափերի շարժական սանհագույցից(բիոզուգարան): Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարան:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և հակահրդեհային անվտանգության միջոցներով՝ կրակմարիչներով: Շինհրապարակի մուտքը ապահովվելու է Երևանյան փողոցի կողմից:

Շինհրապարակի էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի Մուսալեռ եմ/ճ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ շինարարության փուլում կիրականացվի 400 կվԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանից՝ Արմավիր քաղաքի Ս6288ե/կ-ի բարձր լարման վահանակից: Հավելված 3

Շահագործման փուլ: Շահագործման փուլում առևտրի կենտրոնն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն

հրամանի պահանջներին համապատասխան: Շենքի արտաքին մակերեսը երեսապատվելու է երեսապատման սալիկներով և բնական քարերով (տուֆ, բազալտ, ապակի):

Շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսված են միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հրդեհաշիջման համակարգ- Համաձայն նորմատիվային փաստաթղթերի և հաշվի առնելով պաշտպանվող սենքերի շինարարական, կլիմայական և տեխնոլոգիական առանձնահատկությունները, այս նախագծի շրջանակներում նախատեսվել է ինքնաշխատ (ավտոմատ) հակահրդեհային ազդանշանային համակարգ: Հակահրդեհային ազդանշանային համակարգը հաշվարկված է շուրջօրյա և անընդմեջ աշխատելու համար, ինչի օգնությամբ ժամանակին կհայտնաբերվի հրդեհի օջախը և կտեղեկացվի անվտանգության ծառայություն և ԱԻՆ ծառայության հեռակառավարման վահանակին: Հակահրդեհային ազդանշանային սարքավորումները տեղադրվելու են բոլոր սենյակներում, բացառելով սանհանգույցները:

Ջեռուցում և սառնամատակարարում - Ջեռուցման նախագիծը իրականացված է ձմռանը -21°C , ամռանը՝ $+35^{\circ}\text{C}$ հաշվարկային ջերմաստիճանների համար: Շենքում նախատեսված է ջեռուցման և սառնամատակարարման համակարգեր: Շենքի ջերմամատակարարումն իրականացվելու է տանիքում նախատեսված կաթսայատնից: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել երկու կաթսա, յուրաքանչյուրը $Q=Q=300.04\text{ԿՏ}$ հզորությամբ, որը կապահովի ջուր ջերմատարի $T_1=80^{\circ}\text{C}$ $T_2=65^{\circ}\text{C}$ պարամետրերը: Ծխագազերը հեռացվելու են $D=250\text{մմ}$, $H=7.0\text{մ}$ ծխատարով: Կաթսայատան հաշվարկային ջերմային ծախսը կազմում է $Q_{\text{ջ}}=500\text{ԿՎՏ}$:

Սառնամատակարարում ընթացքում շենքի տանիքում նախատեսված է մեկ սառեցման ագրեգատ՝ $Q=502,04\text{ԿՏ}$ հզորությամբ, ապահովվելու է ջուր-ջերմատար $7-12^{\circ}\text{C}$ պարամետրեր: Սառեցման հաշվարկային ծախսը կազմում է $Q_{\text{ս}}=552.04\text{ԿՎՏ}$:

Օդափոխություն- Առևտրի սրահում նախատեսված է օդի ներածման և արտածման մեխանիկական համակարգեր, որոնց նախագիծը կատարված է գործող շին նորմերին և կանոններին համապատասխան: Օդի հեռացումը համակարգից իրականացվելու է ամենաբարձր կետում տեղադրված ավտոմատ օդահեռացման փականներով: Առևտրի սրահում օդի ներածումը իրականացվում է ՆՀ-1 համակարգով, կենտրոնախույս կոնդիցիոների, իսկ օդի արտածումը ԱՀ-1 համակարգով: ՆՀ 1 համակարգը համալրված է ռեկուլպերատորով:

Աշխատասենյակներում օդի ներածումը իրականացվում է ՆՀ-2 համակարգով, կանալային կոնդիցիոների, իսկ օդի արտածումը՝ ԱՀ-2 համակարգով, կանալային օդամղիչի միջոցով: Պահեստների օդի ներածումը իրականացվում է ՆՀ-3 համակարգով, ներածման սարքի, իսկ օդի արտածումը՝ ԱՀ-3 համակարգով, կանալային օդամղիչի միջոցով: Սանհանգույցներից օդի արտածումը իրականացվում է առանցքային օդամղիչներով: Աշխատասենյակներում տեղադրված է հատակային օդամղիչ կոնվեկտորներ(ֆանկոյլներ), առևտրի սրահում կասետային օդամղիչ կոնվեկտորներ: Օդի հեռացումը համակարգից իրականացվելու է ամենաբարձր կետում տեղադրված ավտոմատ օդահեռացման փականներով: Օդափոխությունը իրականացվում է մանրամասն արված նախագծային փաստաթղթերի հիման վրա, ժամանակակից անադմուկ սարքավորումներով:

Օդափոխությունը իրականացվում է մանրամասն արված նախագծային փաստաթղթերի հիման վրա, ժամանակակից անադմուկ սարքավորումներով:

Գազամատակարարումը-կատարվելու է «Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ-ի

համապատասխան մասնաճյուղի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն: Ձեռնարկողը դիմել է գազամատակարարման տեխնիկական պայմանը ստանալու համար:

Ջրամատակարարում- Շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն՝ քաղաքային գործող արտաքին ցանցին միացումով: Հավելված 4:

Ջրամատակարարումը իրականացվելու է Երևանյան փողոցով անցնող $d=160$ մմ ջրագծից: Նախատեսվում է այն իրականացնել Մ50 պոլիէթիլենային խողովակներով:

Ջրահեռացում- Ջրահեռացումը իրականացվելու է միանալով գոյություն ունեցող Բաղրամյան փողոցով անցնող կոյուղագծին $d=400$ մմ տրամագծով պոլիպրոպիլենե խողովակների օգտագործմամբ: Կոյուղագծի երկարությունը 149,0մ է:

Հեղեղատար կոյուղի -Տանիքի ջրահեռացման համար նախատեսված է $\phi 100$ և $\phi 200$ տրամագծով պոլիպրոպիլենե խողովակների օգտագործմամբ արտաքին գծի կառուցում մինչև գոյություն ունեցող հեղեղատար, ընդհանուր 61մ երկարությամբ:

Էլեկտրամատակարարում-Կառուցապատվող տարածքի էլեկտրամատակարարումը կատարվելու է 400կվԱ հզորության տրանսֆորմատորով՝ Արմավիր քաղաքի S6288Ե/կ-ի բարձր լարման վահանակից: Միացումը կաքտարվելու է երկու՝ АВВГ 3x185x1x120մմ² մակնիշի մալուխներով, մուտքային բաշխիչ վահանով և շենքի ներսում իրականացվում է էլեկտրաէներգիայի բաշխում: Հավելված 3:

Էլեկտրասարքավորումների նախագիծը մշակված է 380/220վ լարման համար՝ պոլիէթիլենային խողովակներով:

Նախատեսվում է վահանակի սենյակ՝ 6,8մ² մակերեսով:

S1 400ԿՎԱ տ/ենթակայան նախատեսվում է տեղադրել 7,2մ² տարածքում՝ 1ին հարկում՝ բետոնապատ հատակի վրա: Տրանսֆորմատորի չափերն են՝ 2,25x1.0x2.16մ:

Շահագործման փուլում առևտրի կենրոնի էլեկտրամատակարարումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի և քաղաքացի Գ. Գևորգյանի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Աղբահեռացում- Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ՝ առկա շինությունների քանդման արդյունքում և շինարարության ընթացքում, ընդամենը՝ 14570.3մ³ քանակով: Շինաղբը տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված 5կմ հեռավորության վրա գտնվող քաղաքային աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով: Հավելված 8:

Շինարարության ընթացքում կառաջանա 7776կգ/տարի, իսկ շահագործման փուլում՝ 12600կգ/տարի կենցաղային աղբ: Շինարարության փուլում տեղադրվելու են 2 հատ 1,5x1,0մ³, շահագործման փուլում՝ 4 հատ 1,5x1,0մ³ տարողության աղբարկղեր:

Բարեկարգում և Կանաչապատում- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ, բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում:

Ազատ տարածքներում՝ տեղ-տեղ, ինչպես նաև գոյություն ունեցող ավտոկայանատեղիի եզրագծով, մոտ 12քառ. մ մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզախոտով՝ համատեղված ծաղիկներով և վարդերով:

7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

Շինարարության փուլում. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է տարածքի ջրցանի, տեխնիկական կարիքների, հողի(գրունտի) խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է բերովի ջուր՝ պայմանագրային հիմունքներով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոմատացմամբ: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Շինարարության փուլում աշխատողների քանակը առավելագույն ծանրաբեռնվածության հերթափոխում կազմում է 27 մարդ, որից 5-ը՝ ինժեներատեխնիկական, 22-ը՝ բանվոր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 27 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 648 օր:

$$W = (5 \times 0.016 + 27 \times 0.025) \times 648 = 489,24 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,755 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 3650 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի և անիվների լվացման ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված անիվների լվացումը),

$$U1 = 3650 \times 0.0015 \times 250 = 1368,75 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 5,475 \text{մ}^3/\text{օր:}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1857,99 մ³/շին. ժամ:

Հակահրդեհային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկված է 5,2լ/վրկ:

Շահագործման փուլում ջրօգտագործումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով:

Նյութեր. շենքի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է, սյուները 500x 500մմ,

1000x500մմ հատվածքի, բետոնը B 25 դասի, հեծանները 600x500մմ, հիմնային հեծանները 800x1200մմ, 800x1400մմ ծածկերը իրականացնում են երկաթբետոնից $h=220$ մմ: Արտաքին պատերը իրականացվելու են թեթև բետոնե բլոկներից: Շինարարության փուլում օգտագործվելու են այլ շինարարական նյութեր՝ երկաթբետոնե կոնստրուկցիաներ, ամրաններ, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, ավազ, երեսապատման բարձրորակ սալիկներ և այլն:

Ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն, ինչպես նաև անհրաժեշտ այլ շինարարական նյութերը բերվելու են համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորվելու են շինարարական հրապարակում:

Նախատեսվում է օգտագործել միաձույլ B25 դասի երկաթբետոն: Բետոնանյութը բերվելու է մասնագիտացված կազմակերպության բետոնախառնիչներով:

Բետոնանյութի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված(լիցենզավորված) կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերը պահեստավորվելու է ժամանակավոր շինություններում՝ տակդիրների վրա: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- 4 հատ ավտոինքնաթափ
- 1 հատ բուլդոզեր
- 0,5մ³ շերտփով 1 հատ էքսկավատոր
- 1 հատ ոչ ինքնաթափ
- 1 հատ ավտոամբարձիչ՝ 25 տ բեռնատվության
- 1 հատ բետոնի պոմպ
- 4 հատ բեռնատար կամազ
- եռակցող և էլեկտրական այլ գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման–բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբեռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին, համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰ -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:


Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

8. Ժամանակացույց.

Շենքի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են մոտ 2 տարի 4 ամիս(648 օր):

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ներառված են ժամանակացույցում:

"ԱՌԵԿՏԻ ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՅԱՆՆ" ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՅԻԿ



ՁԱՆԻ	ՁԱՆԻ	ՎՈՐՈՐԴ ԱՆՎՈՐՈՒՄ	ԱՌԵԿՏԻ ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՅԱՆՆ	ՎՈՐՈՐԴ	ՊԵՏԻՎ
2		ՎՈՐՈՐԴ ԱՆՎՈՐՈՒՄ	Արմավիրի մարզ, Արմավիրի նահանգ, Կոտայքի մարզի 44 համարի 9 հարկային, ՀԱՊԻՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ Կ. Եղիշյան	ՇՊՈՒՄ	
ՏՎՈՐԻ		ՕՐԱՅՈՒՑ ԱՆՎՈՐՈՒՄ	ԱՌԵԿՏԻ ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՅԱՆՆ	ՔԱՆՈՒՄԱՐՈՒՄ	
2	ՎՈՐՈՐԴ	ՎՈՐՈՐԴ ԱՆՎՈՐՈՒՄ	ՕՐԱՅՈՒՑԱՆ ԱՐՄԱՆԿ	ՔԱՆՈՒՄԱՐՈՒՄ	
				ՔԱՆՈՒՄԱՐՈՒՄ	
				ՔԱՆՈՒՄԱՐՈՒՄ	Ս. ԿՐԻՍՏՈՅԱՆ

9. Շրջակա միջավայրի բնութագրերը

9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Այն Հայաստանի ամենաբարձր բնակեցված մարզն է, բայց տարածքով՝ ամենափոքր: Մարզը զբաղեցնում է 1231 կմ² տարածք, ՀՀ տարածքի 4.1 %-ը, իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է:

Նկար 2



Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին: Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային:

Այն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (800-1000մ բացարձակ բարձրությունները)՝ հյուսիս – արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ ընդգրկում է Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան, Արաքսի ձախափնյա մասերը և Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային

և պլեյստոցենային, ստորին-վերին չորրորդական բազալները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, լճա-ալուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալները և տուֆերը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ սահմաններում:

9.2. Սեյսմիկա և երկրաբանություն

ՀՀ Արմավիրի մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում: Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,3g$: Ըստ երկրաֆիզիկական համալիր հետազոտությունների արդյունքների՝ ուսումնասիրվող տարածքի գրունտներն՝ ըստ սեյսմիկ հատկությունների երկրորդ կարգի են:

Ուսումնասիրվող տարածքում գրունտի սառելու առավելագույն խորություն՝ 70սմ է:

«Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի, Երևանյան 44 հասցեում նախատեսվող առևտրի կենտրոնի նախագծման ժամանակ կատարել շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում (գրունտների դինամիկ բնութագրերի, հաշվարկային արագացումների որոշում)՝ արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման նպատակով՝ 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՕ-110-Ն Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթների համաձայն:

9.3. Կլիմա և օդային ավազան

Արմավիրի մարզը ծովի մակարդակից տատանվում է 800-1000մ բարձրությունների վրա, իսկ Արմավիր քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա:

Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս), հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40-42°C: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ (հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10-20°C ցուրտ): Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Բնորոշ են միջին արագության՝ առավելագույնը՝ 3,5 մ/վրկ արագության արևմտյան և հարավ-արևմտյան քամիները: Ձյան ծածկույթի առավելագույն հաստությունը կազմում է 42 սմ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:



Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Համաձայն նշված փաստաթղթի Արմավիր քաղաքում կլիմայական բնութագրերն են.

Աղյուսակ 1.

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Սույն տարեկան ցածր-ձյան նվազումը	Ցածր-ձյան առավելագույնը	
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20.0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին			
	ըստ ամիսների													ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					

Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29
---------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 3.


Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	II				
Արմավիր	18/19	19/21	25/26	32/37	44/42	26/21	12/38	9/31	11/35	25/30	23/30	16/20	260/42	42	38	92

Քամի

Աղյուսակ 4.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը (հՊա)	Ամիսներ	Կրկնեփուլությունը, % ըստ ուղղությունների								Միջին արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Չափված ժամանակը, մ/վ			
			Միջին արագությունը, մ/վ											Չափված ժամանակը, մ/վ	Չափված ժամանակը, մ/վ	Չափված ժամանակը, մ/վ	
			Չափված ժամանակը (Չս)	Չափված ժամանակը (ՉսԱր)	Արևելյան (Ար)	Չափված ժամանակը (ՉվԱր)	Չափված ժամանակը (Չվ)	Չափված ժամանակը (ՉվԱր)	Արևմտյան (Ար)	Չափված ժամանակը (ՉսԱր)							25
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արմավիր	917,0																
	հունվար	7	5	17	8	9	8	28	18	7	0,5	0,9	12	20	23	24	77
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	5	1,3						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	5	1,1						
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	7	0,6						
		2,2	2,8	1,9	2,9	2,8	3,6	3,1	3,8	2							



Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում ՀԱԷԿ-ը, Չվարթնոց օդանավակայանը, հանքավայրերի շահագործումը, տարեցտարի ավելացող ավտոտրանսպորտը և աղքատությանը պայմանավորված ամեն տեսակի կոշտ վառելիքի այրումը:

Օդային ավազան. Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Արմավիր համայնքում բացակայում են մթնոլորտային օդի աղտոտվածության դիտակետերը, տարածաշրջանի համար Անալոգիայի կարգով բերվում է Արարատ քաղաքում օգոստոս ամսին կատարված օդային ավազանի դիտարկումները:

- «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կայք էջի՝ Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Բաղաքում գործում է 1 անշարժ դիտակայան և 12 շարժական

պասիվ նմուշառման դիտակետ: Ըստ կայքի՝ օգոստոս ամսվա օդային ավազան արտանետումների ցուցանիշներն են.

- Փոշի(մգ/մ^3)-գտնվում է 0,06 սահմանում, սահմանված միջին կոնցենտրացիան/ ՍԹԿ^{\wedge} 0,10 մգ/մ^3
- Ազոտի երկօքսիդ($\text{NO}_2\text{մգ/մ}^3$)-0,01-0,02 սահմաններում, սահմանված միջին կոնցենտրացիան՝ 0,04 մգ/մ^3
- ԾՃմբի երկօքսիդ ($\text{SO}_2\text{մգ/մ}^3$)- 0,02-ից ցածր, սահմանված միջին կոնցենտրացիան՝ 0,05 մգ/մ^3

Համաձայն տեղեկագրի՝ տարածաշրջանի օդային ավազանի աղտոտվածության ցուցանիշները գտնվում են նորմերի սահմաններում:


9.4 Հողային ռեսուրսներ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և Նրա վտակների փոփոխ բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ավալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փոփոխ կյուլթերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 97 076.1 հա կամ մարզի վարչական տարածքի 78.2%-ը, գյուղատնտեսական նշանակության հողերի 63.5%-ը ոռոգելի հողեր են, չմշակվող հողերը կազմում են 13 207.95 հա, որից աղակալած է 2 986 հա:



Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսերի արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է երկար տարիներ գործող կառուցապատված և ասֆալտապատված տարածքում, որով էլ պայմանավորված է հողաբուսաշերտի բացակայությունը:

9.5.Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ավնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարածև ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այդր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Զասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Զաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերն առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝

օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

9.6 Կենսաբազմազություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սվորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բուլգեի (*Allochrysa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օշան Թամամջյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուկազգիներից՝ բորակաթուկի շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araricum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված են 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ ինկեղեգ ճահճային (*Acorus calamus* L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային (*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit), Ակտիոնոլեմ խոշաբաժակ (*Actinolema macrolema* Boiss), Երնջակ Վանատուրի (*Eryngium wanaturii* Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (*Amberboa iljiniana* Grossh) և այլն:



Նկար 5. Շտերներգիա շնդեղածողկային Նկար 6. Ակտիսուլեմ խոշաբաժակ

Կենդանական աշխարհի. կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խիտունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կռչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակենցուկությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphirophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseptoria* Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (*Rhinolophuseuryales*), վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linnaeus), փոքր ձկնկուկ (*Phalacrocorax pygmaeus* Linnaeus), Ուբադչի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Սատունիկի սկոտոդրիմադուկա (*Scotodrymadusa satunini*), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ (*Aegipus monachus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային մկնաճուռակ (*Glareola nordmanni*), Սատունիկի սկոտոդրիմադուկա (*Scotodrymadusa satunini*) և այլն:



Նկար 7. Արարատյան որդան (*Porphirophora hamelii*)

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

9.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Արմավիրի մարզն ունի զբոսաշրջային մեծ ներուժ՝ իր հարուստ պատմության և մշակույթի հուշարձաններով: Այստեղ հաշվառված է 430 հուշարձան: Եզակի են նեոլիթյան բնակատեղին (մ.թ.ա VIII-V հազարամյակներ՝ Արատաշեն գյուղ), Մեծամորի հինգիագարամյա հնության (բրոնզեդարյան) մետաղածուլարանը, նեոլիթ-էնեոլիթյան (Թեղուտ), վաղբրոնզեդարյան (Մոխրաբլուր), բրոնզեդարյան (Մեծամոր), ուրարտական (Արագած), հելլենիստական (Փարաքար) ժամանակաշրջանների կառույցներ ու բնակատեղիները: Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է հայոց նախկին մայրաքաղաքը՝ Արմավիրը: Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում նշմարվում են Երվանդաշատի փլատակները:

Այստեղ են նաև սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Չվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այր լիճը, Մուսալեռ և Սարդարապատ հուշահամալիրները:

Դրանք հնագույն բնակատեղիներ են, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ և խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի՝ Արմավիր քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 1 հուշարձան):

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն ²
1	2	3	4	5	6	7	8
1			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ		քաղաքային գրասայգում	Տ	1

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձաններ

Աղյուսակ 6.

1	ջրագրական հուշարձան «Մեծամոր» լիճ,	Տարոնիկ գյուղից մոտ 3կմ հյուսիս-արևմուտք գտնվող
2	կենսաբանական հուշարձան՝ «Ավազասերք (պսամոֆիլ) բուսականություն»,	ք. Վ.աղարշապատ, Չվարթնոց տաճարի մոտ
3	կենսաբանական հուշարձան՝ «Ջրաճահճային բուսականություն»	Մեծամոր լիճ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

9.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա:

«Որդան կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արագածի և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում: Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Նկար 8.

Արմավիրի մարզ	«Որդան կարմիր» պետական արգելավայր	21985քկմ	1987
			

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները: Գործունեության տարածքը արգելավայրից գտնվում է մոտ 25 կմ հեռավորության վրա:

9.9 Սոցիալ-տնտեսական

ՀՀ Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ գիջում է միայն Երևան քաղաքին: ՀՀ Արմավիրի մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը, բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 215 մարդ, իսկ Արմավիրի տարածաշրջանի բնակչության թվի համեմատ կազմում է 42.2%: Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի՝ մարզում 2021թ դրությամբ բնակվում է շուրջ 264.0 հազար

մարդ: Մարզի քաղաքային բնակչությունը՝ 3 քաղաքներով, կազմում է 82.5 հազար մարդ, գյուղականը՝ 181,5 հազար մարդ: Բնակչության զբաղվածության ապահովումը մարզի համար կարևոր խնդիր է:

Բնակչությունը միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ՝ 6,6%, ասորիներ՝ 0,1%, քրդեր՝ 0,1%, ռուսներ՝ 0,2%: Քաղաքային համայնքների թիվը 3 համայնք (Արմավիր, Վաղարշապատ (Էջմիածին) և Մեծամոր), գյուղական համայնքները՝ 93 համայնք, գյուղական բնակավայրերի թիվը՝ 94 բնակավայր: Մարզը հիմնականում գազիֆիկացված է, իսկ համայնքները կարիք ունեն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման: Հիմնախնդիր է անտառային տարածքների բացակայությունը, աղակալված, դեգրադացված, երոզիացված հողերի առկայությունը, ստորգետնյա ջրերի անխնա շահագործումը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 9700,7 հա, որից վարելահողերը՝ 40,271,7 հա: Գյուղատնտեսության ոլորտում հիմնականում մշակվում են հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը՝ հացահատիկաընդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր: Չարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը:

Արմավիրի մարզն հարուստ չէ օգտակար հանածոներով, առկա է 42 հանքավայր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2020թ.-ին Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 7.

Արդյունաբերություն	5.8%
Գյուղատնտեսություն	21.7%
Շինարարություն	5.4%
Մանրածախ առևտուր	4.3%
Ծառայություններ	1.4%

Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան» երկաթուղու Երևան-Թբիլիսի 70կմ երկարությամբ հատվածը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով: Գործում են 58 բժշկական կազմակերպություններ: Այստեղ է գտնվում Չվարթնոց միջազգային օդանավակայանը, Արմավիրի ՀԱԷԿ-ը: Համաձայն Արմավիրի մարզի 2017-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ Հայկական ԱԷԿ-ի աշխատակազմի շուրջ 78%-ը Արմավիրի մարզի բնակիչներ են: Մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և Էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Արմավիր քաղաքը գտնվում է Երասխի ձախ ափին, Արարատյան դաշտում՝ Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Որպես բնակավայր հիմնադրվել է 1903 թվականին, իսկ Արմավիր քաղաքը Արմավիրի մարզի վարչական կենտրոնն է

1996 թվականից: 2021թ. տվյալներով քաղաքի բնակչությունը կազմում է 27,7 հազ. մարդ:

Ներկայումս գործում են սեզոնային կամ փոքր հզորություններով և քիչ աշխատատեղերով կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, շինանյութերի արտադրության, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով զբաղվող բազմաթիվ արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ: Արմավիր քաղաքը որոշակի տնտեսական ուղղվածություն չունի, քաղաքի ազգաբնակչության հիմնական զբաղմունքը դարձել է սպասարկման ոլորտը, մանր ու միջին առևտուրը: Քաղաքը հանդիսանում է տարածաշրջանի համար առողջապահական կենտրոն: Քաղաքի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներն են՝ գործազրկությունը, աշխատատեղերի, խմելու ջրի ցածր որակը, ոռոգման ջրի բացակայությունը, կեղտաջրերի հեռացման, բազմաբնակարան շենքերի պահպանության խնդիրը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը,:

Հանաձայն Արմավիրի համայնքապետարանի կայք էջի՝ քաղաքում առկա է 10 միջնակարգ դպրոց, 12 մուկ-մանկապարտեզ, 1 համալսարան, 3 քոլեջ, 1 մարզադաշտ, 3 մարզադպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, շախմատի դպրոց, 5 գրադարան, տպարան, մշակույթի տուն, ռազմա-մարզական վարժարան, գիշերօթիկ դպրոց, 2 հեռուստաընկերություն, կենդանաբուսաբանական այգի, մշակույթի տներ, քաղաքային զբոսայգի, 5 գրադարան:

Այժմ Արմավիրի տարածքը շրջապատված է բազում հնավայրերով, որոնք համարվում են հայկական քաղաքակրթության հիմնական կենտրոնները մասնավորապես մոտակա Մեծամորը, Արմավիրը, Արգիշտիխիսիլին և այլն:

10.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը (բնապահպանական կառավարման պլան)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Արմավիր համայնքի(քաղաք) վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ քանդման, հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ, մասնակիորեն շահագործման փուլում՝ կաթսայատան աշխատանքի արդյունքում ծխագազերի արտանետումների տեսքով:

Գործունեության իրականացումը լանդշաֆտի ծանրաբեռնվածություն չի առաջացնի, քանի որ գործունեության ենթակա տարածքը նախկինում կառուցապատված է եղել:

Այն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում, համայնքի սպասարկման ոլորտի բարելավում):

Հայտով նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր

բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, աղմուկի մակարդակի բարձրացման, թափոնների կառավարման հետ:

10.1 Օդային ավազան. գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների(փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն Արմավիր քաղաքի նորմերի և ելակետային տվյալների հետ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով կատարվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումներ լինելու են շենքի կաթսայատան աշխատանքի ընթացքում՝ գազի այրման արդյունքում՝ թույլատրելի նորմերի սահմաններում:

10.2 Հողային ռեսուրսներ. գործունեության տարածքը նախկինում կառուցապատված է՝ հարթ է:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 1925,մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի, նկուղային հարկի փորման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման,

Էներգամատակարարման համակարգերի կառուցման նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտ, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի հարթեցման և լիցք անելու համար: Իսկ գրունտները, որոնք կպարունակեն խոշոր քարաբեկորներ, շինադրի հետ կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության վայրում բացակայում է բուսահողը, որի պատճառով բուսահողի պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում: Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:

10.3 Զրային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների՝ տեղամասում փորված հորատանցքներով մինչև 5,4 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ամենամոտ ջրային ռեսուրսը Այդր լիճն է, որը գտնվում է մոտ 10 կմ հեռավորության վրա: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարան,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1.5մ չափերի պարզարան,

- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝

որպես շինադր, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու և աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- ջրցանման համար օգտագործվելու և միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու և համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու և պատրաստի վիճակում:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու և.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից,

- բիոզուգարանի մաքրումը կատարվելու և համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են քաղաքային ջրատարին և կոյուղատարին:

10.4 Կենսաբազմազանություն. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է խիտ կառուցապատման գոտում:

Բուսական աշխարհ: Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, բուսականությունը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում հնարավոր չի կենդանատեսակների, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների առկայությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

10.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական կյուլթերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 14570.3մ³ ծավալով,

- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 7776կգ/տարի, շահագործման փուլում՝ 12600կգ/տարի:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ $1.5 \times 1.0 \text{մ}^3$ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=27*120= 3240\text{կգ/տ կամ } 12.3 \text{ կգ/օր(ըստ ծանրաբեռնված հերթափոխի)}$$

Շինարարությունը տևելու է մոտ 2,4 տարի, հետևաբար

$$M=3240*2,4= 7776\text{կգ/տարի կամ } 12,3\text{կգ/օր(ըստ աշխատանքային օրերի թվի՝ 648 օր)}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով առևտրի և սպասարկման սրահի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 35 մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=35*360= 12600\text{կգ/տարի կամ } 47,7\text{կգ/օր:}$$

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմվելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շփիրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական կյուլթերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր կյուլթերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 4 հատ 1,5x1,0մ³ տարողության պլաստմասե աղբամաններ:

Շահագործման փուլում հնարավոր են տրանսֆորմատորային յուղերի արտահոսք՝ հնարավոր վթարների դեպքում, որի վերականգնման աշխատանքները կատարվելու է «ՅԷՏ»ՓԲԸ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Նախատեսվում է.

- տրանսֆորմատորի տեղադրման վայրի հատակը բետոնապատ է՝ հնարավոր յուղային հոսքը հողային, ջրային ռեսուրսներ կանխելու համար,

- անհրաժեշտության դեպքում ենթակայանի վերանորոգումը կատարվելու է «ՅԷՏ»ՓԲԸ-ի մասնագետների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- աղտոտված լաթերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ 1/10 հարաբերությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում են աղբավայր:

10.6 Աղմուկ և թրթռում. շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սահմանարկերի նորմերով: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլ.

- շենքն ապահովված է լինելու օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ պաշտպանիչ միջոցներով,

- օգտագործվող օդափոխիչ և սառեցման համակարգերը պարբերաբար ենթարկվելու են ստուգման՝ շենքում աղմուկի մակարդակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխանեցնելու նպատակով:

10.7 Արտակարգ իրավիճակներ. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Շինարարության փուլում հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է հակահրդեհային 5 տ տարողության ջրի բաք: Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Շինարարության փուլում գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսված միջոցառումներն են.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային միջոցառումների վահանակներով՝ կրակմարիչներով հիդրատներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,

- շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից,

- տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Շահագործման փուլ.

Շահագործման հանձնելուց առաջ առտրի կենտրոնը պետք է ներկայացվի «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ Էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման:

Շենքի ջեռուցման, օդափոխման, օդի լավորակման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների Էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Շենքն ապահովված է լինելու.

- արտակարգ իրավիճակների դեպքում առևտրի կենտրոնի նկուղային հարկը ծառայելու է բնակչության համար որպես ապաստարան,

- դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգով համաձայն՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջների,

- էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցանիշներով, հակածխային օդափոխության արտածման համակարգերով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, սառմամատակարարման համակարգերով, տեսախցիկներով,

- ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով(4 հատ), կրակմարիչներով(46 հատ): Շենքի յուրաքանչյուր սենյակում (2-ից ոչ պակաս) տեղադրվելու են հակահրդեհային ազդանշանային, ձայնալուսային սարքեր,

- հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում:

Շենքի էներգահնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսվում է.

- շենքի արտաքին պատերի ջերմամեկուսիչ նյութերով պատում՝ 40մմ հաստության պենոպլեքսով,

- նորմավորված հրակայուն, ջրամեկուսիչ, գոլորշակայուն նյութերի, հերմետիկ փակվող պատուհանների դռների օգտագործում:

10.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ :

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- պահպանվելու է ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են համապատասխան ցուցանակներ,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն

իրականացվելու է 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (ժամանակավոր՝ տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,

- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/- 11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան: Մասնավորապես.

- հաշմանդամների պահանջմուկներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,

- վերգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով,

- մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

10.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. գործունետության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական

շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.10 Սոցիալական. շինարարության և շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում աշխատելու է 45 մարդ, որից 5 մարդ ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ՝ հերթափոխային գրաֆիկով: Ամենաձանրաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը կազմվելու է 27 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում շենքի հնարավոր առավելագույն աշխատողների քանակը կազմվելու է 35 մարդ:

Շինարարության ընթացքում առաջանալու են բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

Առևտրի կենտրոնի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

- նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,

- բնակչության զբաղվածության աճին:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառվելու են շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Շահագործման փուլում առևտրի և սպասարկման շենքի կառուցումը կնպաստի.

- նոր աշխատատեղերի ստեղծմանը,

- քաղաքի սպասարկման ոլորտի բարելավմանը:

10.11 Բարեկարգում և կանաչապատում.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից,

- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման,

բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Կանաչապտում. գործունեության ենթակա ազատ տարածքի վրա նախատեսվում է կատարել որոշակի կանաչապատման աշխատանքներ՝ խոտածածկի և ծաղիկների տեսքով:

Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքից 30մ հեռավորության վրա գտնվող համայնքային նշանակության գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է Փ89 վերգետնյա պլաստիկ խողովակներով ցնցուղային եղանակով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն(1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր), հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 12 \times 0,4 \times 25 = 120 \text{լ/ջուր կամ } 0,12 \text{մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):$$

Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողը բերվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության հիման վրա՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո:

11. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- հակահրդեհային պահանջների՝ ՀՀԸՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխանության պահպանում,
- թափոնների տեղափոխում համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից ապահովվելու է նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
- կատարվելու է ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- իրականացվելու են շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան

- տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- հարակից շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ,
 - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
 - նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
 - պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,
 - ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 150,0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

